



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

676

20

---

R-48

1276

ԽՈՐՀՈՒՐԴԻ ՀԱՆԳԻՍԻ

ԱՐԱՐԶԱԳՈՐԾՈՒԹԵԱՆՆ

# ԱՍՏՈՒՇՈՅ



ՅԱԳ Ի ԳՐԱԼՈՐ ԲԱՆ  
ՊՕՂՈՍ Գ. ՔԷՐԷՍԵՃԵԱՆ

— ԵՐԿՐՈՐ ՏԻՊ —

ԳՈՐԾ ԱՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ



20  
—  
P-48

ՊՕԼԻՍ  
ԳՐԱՆ ԱՐԱՄԵԱՆ  
—  
578

10001

010



0  
48  
56

ԽՈՐՀՈՒՐԴԻՔ ՀԱՆԴԻՍԻ

ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹԵԱՆՆ

# ԱՍՏՈՒԾՈՅ



ՅԵՂ Ի ԳՐԱԽՈՐ ԲԱՆ

ՊՕՂՈՍ Գ. ՔԷՐԷՍԷՃԵԱՆ

— ԵՐԿՐՈՐԻ ՏԻՊ —

ԳՈՐԾ ԱՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

—  
1878

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԱՆԱԿ

23009

ՅՅԱՅԳԿՈՑԴՈՒՔԻ ԱՐԽԱՆԱԿ

ՑՈՒՑԿՈՅՍԱ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԱՆԱԿ



2291  
40

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԱՆԱԿ

2012

Ա.Ռ.

ՆՈՐԻՆ ԲԱՐՁՐԱՇՆՈՐՀ ՍՐԲԱՉՆՈՒԹԻՒՆ

ԱՐՁԱՆԵՏԻՔ ՊԱՏՐԱԲԱՐ Կ. ՊՈՒՍՈՑ

Տ. Տ. ՆԵՐՍԷՍ

ՍՐԲԱՉԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԱՐՔԱՊԵՏԵԱՆ

ԸՆԴՈՒՆԱԿԱՆ ԱՎԵՍՏՈՒԹԵԱՄԸ

Ի ՄԵՆԱՐԱՆՍ

Մրթազան Տեր,

Միայնորդու յիշատակաց չնաղ հանգամանք զու-  
գակցորդք, զոր ի մեծառուք անձին Մրթազանուքեանդ  
հախաւորագոյն իմն լծորդէ՛ վերաբերուքեամբ առ  
Ներսիսեանս ուսմանց յարկ, յորում նախ՝ զի ման-  
կականի մարգիցդ լուծան խանձարուք հոգւոյ եւ  
մտաց, եւ երկրորդ՝ զի ընդ հովանաւոր պատշաճու-  
քեամբ գեերջանիկ անուանակցիդ՝ ի հարուստ ամաց  
հետէ եւ այս առանց ի բարւոք կարգացն ստերիւե-  
լոյ եւ գոգ դոյզն ինչ անկառունակ նսեմութեան  
միօրինակ իմն յարատեւէ ի կարգաւորեալ ընթացս  
իւր, եւ դարձեալ երրորդ՝ որ բազմահոյլ շնորհա-  
պատր սանուց նորին կարի քաղցրագոյնն է եւ անձ-  
կալի, որպէս առ մայր բազմեալս՝ փոյթ մեծ է  
ի Ձեզ եւ առանձինն մտադիւր խնամք առ նորին  
անընդհատ պայծառութիւն, յորդու եղեն ինձ զնա-



խախայրիս վասակոց իմոց փառազարդել յանուն  
Սրբազնութեանդ՝ դրուեալ զայն ի նախաստեղծեալսն:

Թէպէ՛ս ըս շահաւետութեան առ այլովք բնութեա-  
զոյն երկասիրութեամբ՝ անխախտ պարապմանցս  
դոյզն իմ այս երկ չիցէ ապաքէն արժանաւոր պատ-  
պանութեան բարձու անուանդ, այլ ընդաբոյս նե-  
րողութիւն Ձեր սեանչելի՝ ընդ մեծի հայրապօր սի-  
րոյ եւ գորովայից պատկանութեան՝ քաջալերեաց  
զիս խրատուել յառաջադրութիւն մտացս, ակն ու-  
նելով խնդամիտ ընդունելութեան վասակոցս ի Ձէնց  
եւ հաւանութեան բարձու անուանդ հովանաւորու-  
թեան, որ եւ զԱսիականս բարեճախանձ ընկերու-  
թեան արժարձեացէ անուստ զխանդ ոգւոցն եւ զիղձ  
յեսս օգտամտոյց ձեռնարկս՝ յօժանդակութիւն բար-  
գաւան զարգացման Հայկազն մանկւոյն :

Այսու բերկրայից յուսով մնամ

Ձերունդ բարձու Սրբազնութեան

Ի Խաղիւղ Կ. Պօլսոյ.

Աննախոնարհ որդի

ՊՕՂՈՍ Գ. ԲԵՐԵՍՏՅԱՆԸ

ԽՈՐՀՈՒՐԴԻ ՀԱՆԴԻՍԻ

ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹԵԱՆՆ

ԱՍՏՈՒԾՈՅ

Ա.

Փառաւորեսցուք զԱստուած, քանզի մեծ է նա եւ  
ամենուրեք, նա տեսանէ զամենայն. օրհնեսցուք  
զԱստուած, քանզի ամենակալ է նա:

Յոջընչէ արար նա զամենայն, զարեգակն՝ ի լոյս  
տուրնջեան, եւ զլուսին՝ ի լոյս գիշերոյ :

Կէտն՝ որ պատառէ զալիս Ովկիանու, փիղն՝ որ  
վազվազէ ի վերայ լեռանց, որդն՝ որ սողայ ի գետնի,  
եւ որ ինչ յաշխարհի աստ, Աստուած է այնոցիկ  
ամենեցուն արարիչ :

Թռչունք ի ձողողել իւրեանց ի վերայ դալարա-  
զգեաց ոստոց՝ հանեն նուազս զովևոսից առ Աստ-  
ուած : Առուակն օրհնարանէ զնա յընթանալն իւ-  
րում ընդ քարաժայռս խոխոյմամբ :

Թէպէտ դեռ եւս մանուկ տիովք եւ չրթամբք  
թոթով, այլ եւ ես փառաւոր առնեմ զԱստուած :

Չեն բազում ժամանակք յորմէ հետէ ծնեալ է իմ,  
յառաջագոյն չեւ էին լուծեալ կապանք լեզուի իմոյ,  
եւ չգիտէի թէ իցէ Աստուած, անհասանելի էին ինձ  
ամենայն ինչ. այլ այժմ քանզի կարեմ խօսեալ, պարտ



է զի փառաւոր արարից զնա, եւ զի կարեմ ճանա-  
չել զբարութիւնս նորա, պարտ է ասլա սիրել զնա  
յամենայն սրտէ իմմէ :

Կոչեացք զիս Աստուած, պատրաստ եմ երթալ  
զհետ նորա, հրամայեացք ինձ, վաղվաղակի հնա-  
զանդեցայց նմա :

Ըստ աճել տիրոյս՝ խելամուտ եղեց մեծի շնորհաց  
նորա, եւ ուսայց փառաւոր առնել եւ ծառայել  
նմա ըստ սրտի նորա :

**Բ.**

Այլ արդ զի զարգացեալ է իմ եւ ուսեալ ի հորէ  
իմմէ ճանաչել զԱստուած, եւ լուեալ զքահանային  
պատարագ եւ զխրատս նորա, գիտեմ զի Աստուած  
արար զիս՝ առ ի սիրել զնա եւ ծառայել նմա: Իսկ  
արդ սիրեցից զՍրբաբիշն իմ, եւ երբէք ոչ ամաչեցից  
օրհնել եւ փառաւորել զնա ամենայն ուրեք :

Քաջ գիտեմ զի Աստուած եղ զիս յաշխարհի աստ,  
փրկեաց զիս ի մեղացն յոր արկ զմեզ Ազամ նա-  
խահայրն մեր, առաքեաց զՈրդին իւր միածին՝ առ  
ի փրկել զմեզ, ընդ որում եւ զՀոգին սուրբ: Որդին  
Աստուծոյ ծնաւ յամենասուրբ կուսէն Մարեմայ՝  
ի թագուհւոյն երկնից եւ ի զօրաւոր բարեխօսէն մերմէ:

Յիսուս որդին Աստուծոյ ուսոյց մարդկան զաստ-  
ուածային վարդապետութիւն իւր, նուիրեաց զանձն  
իւր ի փրկութիւն մեր, մեռաւ անարգաբար ի խաչին,  
յարեաւ յաւուրն երրորդի, եւ յետ աւուրց քառաս-  
նից համբարձաւ յերկինս: Իսկ առ անմահ գործելոյ  
զանդին պատարագ խաչին իւրոյ, տուեալ է նորա  
իշխանութիւն ամենայն քահանայից՝ հանապաղորդ

եւ ամենայն ուրեք առնել զիշխատակ նորա սրբով  
պատարագաւ, յորում իջանէ նա ի վերայ սեղանոյն  
որպէս էջն յաշխարհ :

Այսու սրբով խորհրդով դալստեան իւրոյ ամենայն  
աստուածային փառօք իջանէ յեղկելի սիրտս մեր,  
որ ի ձեռն հաւատոց եւ խոնարհութեան եւ եթ կա-  
րող է արժանի լինել նմա :

Յետ սրբարար մկրտութեանն հաստատեաց նա  
զսուրբ խորհուրդն աղաշխարութեան առ ի քաւու-  
թիւն մեղաց մերոց, եւ իշխանութիւն ետ եկեղեցւոյ  
թողուլ զմեզս մեր՝ ի խոստովանել մեր զայնոսիկ  
ոգւով հլութեամբ ժողանորդին Աստուծոյ :

Սրբ զայս ամենայն գիտացեալ հիացմամբ փա-  
ռաւորեմ զամբաւ զթութիւնն Աստուծոյ, եւ մի լիցի  
ինձ երբէք զաղարեւ ի սիրելոյ զնա եւ գոհանալոյ  
զնմանէ որ անսպառ աղբիւրն է բարութեան :

**Գ.**

Օ՛ն, ելցուք ի դաշտ՝ տեսանել եթէ զիմարդ աճեն  
ծաղկունք, ունին մատիցուք դաշնակաւոր գեղգե-  
ղանաց թռչնոց: Ե՛կ, սիրելիդ իմ, խաղալ եւ զբօս-  
նուլ ի նորաբոյս դալարիս :

Վաղ իսկ անցեալ է ձմեռն, ծառք վերնձիւղին,  
փթթին վարդապարմիր ծաղկունք դեղձեոյն, դալա-  
րագեղ պճնին տերեւք, անանուխ եւ սամիթ եւ այլք  
սյսպիսիք սիրին ընդ բլուրս եւ ընդ ձորս. մանու-  
շակն համեստ թագչի ընդ ստուերաւ, եւ քաղցրա-  
բոյր ծաւալէ զհոտ իւր :

Հաւու նստեալ ի թուխս՝ ժամէ ի ժամ մնայ անձ-  
կանօք սրահուն բեկանելոյ կտցաւն զխեճեպս ձուոցն



եւ արտաքս ելանելոյ յայնոցիկ սիրասուն վառեկացն :

Գառինք նորածինք հազիւ հաջ կարեն կալ ի մարմանդի ի վերայ անգոր ոտիցն եւ դողդոջեալ յենուն ի մարս իւրեանց : Ո՛վ մատաղ գառնուկք , տիպարք անմեղութեան , եթէ անկանխելիք զգեանի , չիք ինչ ձեզ անտի վտանդ , քանզի բնութեան սիռեալ է զերկրաւ գորգ ինչ քնքուչ կանաչագեղ մարմանդի :

Թիթեռնիկք հոլաթեւեալ յարեգակն կոյս , թռթռին ճիւղոյ ի ճիւղ եւ ի ծաղկէ ծաղիկ :

Ամենայն ձագունք նորածինք հրճուին ի բարեբաստիկ լոյս տուրնջեան , եւ ցիր ընդ ցան աստ եւ անդ խաղան եւ խայտան , եւ փառաւոր առնեն զԱստուած , որ կեանս ետ նոցա :

Նոքա խայտալ եւ եթ կարեն եւ ցնծալ սրտիւ , այլ մեք օժտեալ եմք եւ այլով իւրիք շնորհօք , որով կարող եմք օրհնարանել զԱստուած ի յօգաւոր բարբառ շրթանց մերոց :

Թռչունք ճուռողեն , գառինք բառաչեն , այլ մեք միայն կարեմք խոկալ եւ խօսել զբարեացն Աստուծոյ եւ սրտագին գոհանալ զայնցանէ :

Ապա փառաւորեսցուք զԱստուած՝ օրհնաբանելով զնա եւ ի դիմաց արարածոցն , որոց ոչ են լեզու :

Ո՛վ ծառք ծաղկեալք , եւ գառինք մատաղերամք , հչ ասպքն եթէ լեզու էր ձեր , գովարանէիք զբարութիւնն Աստուծոյ . այլ զի սրկասէ ձեզ յօդաւորութիւն բարբառոյ , մեք ինքնին բարբառեսցուք փոխանակ ձեր , մեք շնորհս կալցուք զբարձրելոյն Աստուծոյ փոխանակ ձեր՝ ընդ ամենոյն ակղիս , ի լերինս բարձունս եւ ի դաւարագեղ վայրս :

Դ .

Հովիւ խնամ տանի ոչխարաց իւրոց եւ արածէ զնոսա ի դաշտս մարգածինս եւ առ ափամբք ականակիտ ջուրց , զգառինս նորածինս եւ վաստակարեկս բառնայ յուս իւր եւ ի գիրկան , եւ զօցտեալսն կոչէ առ ինքն :

Աստուած է Հովուապետ բարի , Տէր տիեզերաց , եւ խնամակալ ամենայնի , փառք նորա են երկիր , եւ մարդիկ՝ հօտ իւր , եւ բոյսք՝ արօտ նորա :

Մայր սիրէ զորդի իւր , եւ ի գութ ծնելասէր գգուէ եւ ողջագորէ զնա ի վերայ ծնդաց իւրոց . գուն գործէ կաղդուրել զմարմին նորա կերակրովք , եւ տակաւ խելամուտ առնէ զնա ամենայնի : Ի խօթանալ նորա առաւել եւս խանդաղատանօք խնամէ զնա , եւ ի ննջելն հսկէ զգիշերն ողջոյն առ նմա , եւ ակն կալեալ մնայ անձկանօք զարգանալոյ մանկանն , զի ուսուցէ նմա զսարտոս իւր առ Աստուած , առ ծնողս եւ առ հայրենիս :

Աստուած է զօրացուցիչ ամենայն մարց , ազատարար նոցա ի վտանգաց , եւ մխիթար եւ խնամակալ յամենայնի :

Աստուած է որ սլաշտարանէ զամենայն , զի ի նմանէ արարաւ ամենայն ինչ : Ամենայն թագաւոր իշխէ ի վերայ ժողովրդեան իւրոյ , թագ ոսկի ի գլուխ իւր , եւ մական արքունի ի ձեռին , բաղմեալ ի գահ չքեղ՝ հրամայէ ամենեցուն , եւ ամենքեան խոնարհեալ մեծարանս դնեն նմա սրտակառանօք : Թագաւոր՝ որոյ աթոռակից իւր իցէ խնաստութիւն , իբրեւ զհայր հասարակաց փոյթ յանձին ունի ի յարդարել զբարե-



կենդանութիւն ժողովրդոյն սլաշտպան կայ առաքինեաց՝ հատուցմամբ բարեաց, եւ պատուհասէ՝ որոց զչար իցէ արարեալ :

Աստուած է թագաւոր թագաւորաց, եւ թագ նորա արեգակն, դահոյս արկեալ բազմի նա ի վերայ աստեղաց, հրամայէ նա մեզ կեալ եւ կեամբ, հրաման տայ մեռանել եւ մահու մեռանիմբ, իշխանութիւն նորա տարածանի ի վերայ ամենայն երկրի, եւ լոյս երեսաց նորա ցոլանայ յամենայն արարածս իւր :

Աստուած է մեր հովիւ, պարտ է մեզ երթալ գէկտ նորա : Հայր մեր է նա, պարտ է մեզ սիրել զնա, թագաւոր մեր է նա, եւ պարտ է մեզ հնազանդել նմա՝ որպէս թագաւորաց թագաւորի :

**Ե.**

Օ՛ն, եկայք եւ ի գնին մատերուք բոսորագեղ թերթից վարդիս սյտորիկ, որպէս տատանի նա ի վերայ կանաչագեղ ցողնոյն, չքնաղ դշխոյն ծաղկանց, որոյ տեսիլ նազելի եւ հոտ քաղցրածաւալ յինքն ձգէ զամենեւինս Այլ առաւել գեղեցիկագոյն է որ զվարդն արար, եւ սիրելի ամենայն սրտի :

Հզորագոյն է առիւծ քան զամենայն կենդանիս : Յեղանել իւրում յորջոյ իւրմէ, ճօճէ զտուտն ճապրել, մոնչէ որոտագին՝ բաշք զգլխովն խողանացեալք, եւ ամենայն կենդանիք ճարակաւորք թողուն առ ահի զբաշտն եւ գնան անտի ի բաց, մինչեւ վայրագասուն իսկ գազանաց յերեսաց նորա ի փախուտ խուճապել յանապատ տեղիս : Այս, հզոր է առիւծ, այլ որ ստեղծն զնա՝ հզորագոյն է քան զնա : Նորա ըստ սրտի իւրում եւ ըստ կամացն չափ եւ

սահման կարգեալ է կենաց մարդկան, եւ չիք ոք որ ի մեղանչելն իւրում փրկեսցի յարդար բարկութենէ նորա եւ ի ցամանն շանթից :

Լուսապայծառ է արեգակն : Ի ծագել իւրում յանամպ եթերին եւ ի հատանելն զբոցակէզ ճանապարհ իւր՝ սպաէ ի վերայ երկրի զլոյս իւր : Այլ քան զարեգակն պայծառագոյն է եւ փառահեղ որ հաստատեացն զնա : Ընդ ամենայն տեղիս է նա, եւ լոյս երեսաց նորա ի վերայ ամենայն արարածոց, գիշեր նսին անմատոյց, եւ Աստուած է անուն նորա, գործք նորա են Տիեզերք, եւ գեր ի վերոյ է նա քան զամենայն գործս իւր : նա ինքն է լրումն եւ պսակ գեղեցիկութեան, բարութեան եւ ճամարտութեան :

**Զ.**

Ահաւասիկ անհոփին ճառագայթք արեգական, ցողն գիշերային իջանէ գերկրաւ, եւ հրատապ ջերմութիւն տուրջեան մեղմանայ ի սմին սահուն : Ծաղիւնք փակեն զիւրեանց թերթս նկարէնս, եւ գլխաւոր անկանին զցողնովք իւրեանց :

Վատեակք նիրհեն ի քուն քաղցրութեան ընդ թեօք մարց իւրեանց, թռչունք դադարեն յերգոց, եւ մտեալ ի բոյնան՝ գլուխ ընդ թեօք հանգչին յստա ճառոց :

Ո՛չ ինչ բզգիւն լսելի լինի ի փեթակին, յոր մեղուք հանապազորք մուտ եւ ել աննն, եւ որոց թողեալ զվաստակ իւրեանց ննջեն ամենքեան յանդորրու ի մոմեղէն սենեկի իւրեանց :

Ոչխարաց մակաղէլոց ի վերայ փախուկ գեղման



իւրեանց ոչ եւս լի բառաց ի վերայ բլրոց :

Մանկունք մոռացեալ են զխաղա իւրեանց, չիք ոք չիք ուրեք. ոչ ոտնաձայն, եւ ոչ անցորդ ի ճանապարհս, ոչ սայլիցն անուոց ճոնչիւն, եւ ոչ քաղցրալուր մրմունջ մանուկ սայլորդին. դարբինն ոչ եւս բախէ զուռն իւր ընդ սալ. ոչ եւս լի խորնտիւն սղոցի հիւսան, ննջեն ամենայն արարածք, մարդիկ եւ անբանք :

Երկինք եւ երկիր ի խաւար պատեալ, եւ ահա գիշեր է ամենայն ուրեք :

Ո՞ր իցէ որ հսկէ որոց ննջենն, եւ յապիկարութեան անդ նոցա մ պաշտպան կայ նոցա :

է ահն որ ոչ երբէք նիրհէ, եւ տեսանէ զամենայն առանց լուսոյ արեգական, չեն ինչ նա ալետք լուսոյ նորա ի ճանապարհի իւրում, եւ ոչ առտնին լուսոյ կանթեղին. Ո՞չ ի խնդիր լինի նա աստեղց յերկինս ի գիշերի, չիք ինչ խոջընդակն տեսութեան նորա. խնամէ զամենայն մարդ, ահն է նա Աստուծոյ, որոյ ձեռն հանապազորդ պաշտպանէ զմեզ :

Տուաւ մեզ քուն յԱստուծոյ ի սիրտիս եւ ի դիւր վաստակոց մերոց, եւ գիշեր առ ի հանգիստ :

Մայրն որդեսէր՝ մատն ի բերան եւ ոտն ի մատին շրջի ընդ երեկոյս ի տանն անչորնջ յամենայն տեղիս առ ի խափանել եւ զբոյզն աղմուկ, զի մի զարթնուցու մանկիկն ի քնոյն քաղցրութենէ. խնամով արկանէ զնովաւ զլարագոյր որրանին, եւ ի բաց բառնայ զճրագն զի մի արգել լիցի աչաց նորա :

Ա. յապէս եւ Աստուած ի մայրն մտանել արեւու արկանէ զսեւաթոյր քօղն զերկրաւ, եւ խաղաղե-

ցուցանէ զամենայն ինչ, զի քաղցր ի քուն լիցի գերդաստան իւր մեծ :

Ի քուն լերուք հանգստեամբ, ամենայն վաստակեալք, ննջեցէք մանկունք փաքունք եւ բոցեք, քանզի հսկէ Աստուած ի վերայ ձեր, եւ աչք նորա անքուն հանապազորդ բաց են առ ի պաշտպանել զձեզ : Յորժամ մեկնի խաւար եւ փարատին անջամուղջք գիշերոյն, եւ մինչ արօիննոյն լուսաստիւռ ճառագայթք շողան յաչս ձեր, դուհացարուք զՏեսունէ որ պահպանեաց զձեզ ի գիշերի : Ծաղկունք բուրեն Աստուծոյ զքաղցր բուրմունս իւրեանց : Թոջնոց մինչչեւ ընկեր գընկեր կոչեցեալ զսհարան լինին զնմանէ. եւ մարդ ելանէ յանկողինս իւր՝ ունելով զանունն Աստուծոյ ի սրտին, եւ յիջանելն անտի ընդ առաւօտն՝ վերստին փառաւորէ զանուն նորա :

**Է.**

Աստ ինձ, որդեակ, ուստի եկիր եւ զինչ տեսեր : Շրջեցայ ընդ մարմանդս, եւ ոչխարք ճարակէին ընդ պարարտ դալարիս, եւ չուրջ զինեւ մակաղէին ընդ ստուերաւ տերեւախիտ ծառոց : Յորեանն ատոք բուսեալ էր յարտավայրի եւ մեկունն եւ հարսնուկ խառն աճէին ընդ նոսա : մարմանդք զարդարեալ էին մեծաւ շքեղութեամբ :

Եւ ոչ այլ ինչ տեսեր եւ ի քնին առեր, որդեակ, է եւ այլ ինչ վերագոյն քան զայդ ամենայն, Աստուած ի դաշտի էր, եւ ոչ տեսեր զնա :

Յաճեցայ ընդ թանճրախիտ անտառս, եւ տեսի զի շնչէր հոգով յոստս ծառոց, քարավազ՝ խոխոջանօք վայրաբերէր ի գագաթանց ժայռից, սամոյրն



նստրտանէր յոստոց յոստս ծառոց, թռչունք միաբարբառ երգէին քաղցր ի նուագ: Վիթէ զմյդ միայն լուար, սրդեակ, դարձ անդրէն ուստի եկիրն, քանզի առաւել քան զայդ ամենայն է այլ ինչ կարի մեծ եւ արժանի լինլոյ: Էր Աստուած ի ճայն հողմնցն եւ ի կարկաջ ջրոյն, եւ զիւրդ ոչ լուար զճայն նորա:

Տեսի զլուսին, որ բարձրանայր յետ կուսէ ծառոց իբրեւ զկանթեղ արծաթի, աստեղք ծաղէին մի զկնի միոյ, եւ ահա յանկարծ յարեան ամպրոպք արջնաթոյրք, եւ ընթանային ընդ հարաւ: Փայլակն լուսաւորէր զերկինս, կայծակն ի հեռուստ որոտայր շանթարձակ, լուայ զահագին որոտումն եւ եղէ սրտաթափ:

Ի կայծակէ եւ եթ երկնչիս, միթէ չէր այլ ինչ աւելի քան զիայլակն ահարկու, դարձ անդրէն, որդեակ, քանզի է ինչ մեծ առաւել քան զայդ ամենայն, զիւրդ ոչ ծանեար զԱստուած որ էր ի մրկի անդ: Աստուած է ամենայն ուրեք եւ յամենայնի զոր լեմքն եւ տեսանեմք, չիք ինչ առանց նորա, հարկ է զի եւ ի միտս մեր լիցի նա հանապաղ: Բ.

Արեգակն բոցակիղէ զմեզ որդէս կապար հրաչէկ, զի հասարակեցաւ օրն, եկայք նստարուք ընդ հովանեաւ վարսագեղ ծառոց, որոց ոտք արկանեն զմեք ստուեր հանգոյն սաղարթախիտ տաղաւարաց, ընդ որս ճաճանչ արեգին չկարեն թափ անցանել: Դալարազուարձ մարմանդ տարածանի ընդ ոտիւք մերոյք, առուակն ախանակիրս մօտ քերեալ

հոսէ առ ծառովք, եւ երես երկրին շուրջանակի ծաղկազարդ յօրինեալ. հանգիցուք ի տեղւոջս, եւ նիրհեսցուք ի քուն քաղցր:

Ոչխարք մակաղել եւ եթ գիտեն եւ ի քուն լինել ընդ հովանեաւ, այլ մեք բանաւորք ելով կարեմք փառաւոր առնել զԱստուած, եւ ժամանեցուցանել առ նա զբարբառ մեր:

Աստուած, արարիչն մեր, արար զՋերմութիւն արեգական յաճումն բուսոց եւ զհովանիս ծառոց ի հանգիստ, եւ զծառս պտղալիցս ի սնունդ, եւ ջուրք կարկաջահոսք յոտոգումն երկրի:

Զիւրդ մարթ իցէ մեզ բարձրացուցանել զճայնս մեր մինչեւ յերկինս, եւ անդր քան զերկինս երկնից: Այլ չէ ինչ հարկ զի ճայն մեր հասանիցէ մինչ ի յերկինս, քանզի լսէ Աստուած եւ զմրմունջ մեր, եւս եւ զչնչեսոյ միջատին բզզիւն ընդ վիմաւ. եւ որպէս յերկինս, նոյն եւ յերկրի է նա:

Այլ ո՛վ մանկունք աղածրիք, զիւրդ հնար իցէ մեզ խօսել ընդ նմա ընդ յաւիտենականին Աստուծոյ: Մի մոռացուք զաջն որ արար զմեզ, եթէ ասկիկարս գտցուք զմեզ ի խօսել ընդ նմա, գէթ թոթովեսցուք զանուն նորա, որ եբաց զբերան մեր. նա՛ զի եւ ի չխորհելն մեր զնմանէ՛ ոչ ի մոռացօնս արկանէ զմեզ, հանապաղ օրհնէ զմեզ եւս եւ ի յապաղել մեր յօրհնաբանութիւն նորին:

Նա հաստատեաց զքնքուշ զանդամս մեր, եւ օր քան զօր կաղզուրէ զայնոսիկ, այլա փառաւոր արացուք զնա հանապազօրդ յանկեղծիկ սրտէ:

Ոստք փթթին, արձակին տերեւք, ծաղկունք փոխին ի պտուղս, այլ եւ ոչ մին ի նոցանէ ճանաչէ



զԱստուած, եւ կարէ շնորհս ունել զբարութենէ նորա: Բուրմուռք ծաղկանց եւ տեսիլ պտղոց զմայլեցուցանեն զմեզ, այլ չեն նոցա բանք ի փառաւորել զԱստուած:

Նա արար զտունկս առ ի պտղատու լինել մեզ, եւ զմարդ յօրհնարանութիւն իւր եւ ի փառս սքանչելարուեստ ձեռին:

Սիրեմք զԱստուած, քանզի օրհնէ նա զմեզ, գոհանամք զնմանէ վասն ստեղծանելոյ նորա զմեզ, զի քաղցր են կեանք: Պաշտօն հարկանեմք նմա, քանզի Արարիչ է ամենայնի, սիրեմք զարարածս նորա, զի ձեռաց նորա են գործք:

Ձէ մարդ ապաքէն ունել մեզ զբարութիւնն Աստուծոյ, որով սիրէ նա զամենայն բանաւոր արարածս իւր. այլ կարեմք ուրախ լինել ընդ բարութիւնն նոցա ամենայն, զոր ընծեռէ նոցա աննախանձ:

Գոհարան լիցուք զՏեառնէ ի զբօսանս մեր եւ յանձկութեան ժամս, ի զրկանս մեր եւ յուրախութեան, օրհնեսցուք զնա ի յարթութեան եւ ի քուն, եւ անդն նորա եղիցի հանասպալ ի շրթունս մեր:

**Թ.**

Հիւղ մշակին ծածկեալ է ի պրտուոյ, մայրն բազմեալ առ դրան մանէ բուրդ, մանկունք նորա կան առ նմա, զբօսնուն ի դալարութ. դուստրն երէց ուսուցանէ քերցն հնազանդ լինել եւ վաստակել: Հայրն առ ի հայթայթել զպարէն նոցա ընդ քերտն մտեալ աշխատի զօրն ցերեկ: է զի սերմանէ նա եւ է զի հնձէ, մերթ գործէ զհող եւ մերթ ցնցմամբ ծառոց թափէ զպտուղն: Ի մտանել նորա ընդ

երեկս ի խրճիթն, մանկունք նորա ցնծութեան կայթիւք ելանեն ընդ առաջ, մայրն պատրաստէ զքնթրիս:


Ամենեքին որդիք եւ անդամք են միոյ միայնոյ գերդաստանի, եւ գլուխ ընտանեացն հայր նոցա. եթէ ընտանիք բազմաթիւ իցեն եւ երկիր բազում, ծառայք լինին նոցա յօգնականութիւն, եւ ամենեքեան հանդէին ընդ միով յարկաւ: Ուտեն զնոյն հաց եւ ի ծուր իջեալ միաբան փառաւորեն զԱստուած: Շաղկապեալ կան ի մի զօդ սիրոյ, եւ ի ջերանել ումեք ի նոցանէ յախտս ինչ, գուժք աղեսց ամենեցուն զնովա խարչատին, եւ ի բժշկիլն խնդան ամենեքին ուրախութիւն մեծ:

229 / 40

Տնակք մօտ առ մօտ կանգնեալ, եւ զողցես իմն ամենայն գերդաստանք զրացի են միմեանց. ի ձեմել եւ կամ յերթալն նոցա ուրեք սլատահեն միմեանց, վաճառեն եւ զնեն յիրերաց, եւ ի լսելն զձայն զանդակին երթան յեկեղեցի: Տեսեալ զաղբատն ողորմին նմա եւ մխիթարեն զախտաժէան:

Այս օրինակ է կենցաղ գեղջից ի շէնս կառուցեալս ընդ ստուերաւ անտառաց: Այսպէս են եւ քաղաքք եւ անթիւ պողոտայք նոցա, եւ իշխանք որ վարեն զնոսա:

Աշխարհ ինչ մեծատարած հանդերձ քաղաքք բազմօք կազմէ թագաւորութիւն, որոյ սահմանք են լերինք. գետք՝ ճանապարհք նորա՝ երկայնաձիգք, եւ ծով շուրջ պատէ զնովա: Հայրենակիցք որք ընդ միով տէրութեամբ կան, խօսին զնոյն եւ զմի լեզու: Համագունդ վառին ի մարտ՝ ի պաշտպանութիւն կենաց իւրեանց եւ աշխարհին, ի միասին վայելեն ի խաղաղութեան եւ անսան միում եւ եթ թագաւորի:





Պետութիւնք բազումք, կրկնք եւ ծով եւ ցամաք՝  
 ընդ այլ եւ այլ դատուիք երկնից կազմեն համատա-  
 րած զաշխարհ ընդ իշխանութեամբ միայնոյ իշխե-  
 ցողի : Որպէս մըջիւնք ի բոյնս իւրեանց այնպէս եւ  
 մարդիկ անհամար են ի վերայ երկրի : Որոց բնա-  
 կութիւնք իցեն ի գաւառս արեւակէզս, սեաւ են  
 քոյնք նոցա : եւ որոց ի ցրտագին աշխարհս,  
 մուշտակօք պատսպարեն զանձինս, են որք զովանան  
 դինեաւ, եւ են որ ըմպեն զկաթն քոքոյի : Այլք  
 երթան ի խնդիր հովասուն վայրաց եւ ականակիտ  
 ջուրց ի բոյժ ծարաւոյ իւրեանց :

Մարդիկ համօրէն միոյ Աստուծոյ են ընտանիք,  
 եւ անձնիւր ոք ճանաչէ զԱստուած, որպէս ոշխար  
 զիւրն հովիւ, ոմն յայտ լեզու եւ ոմն յայն կարգայ  
 զԱստուած, եւ նորա խելամուտ լեալ պիտոյից նոցա  
 հասանէ յօգնականութիւն. չիք ոք նմա ընդգի-  
 մակաց՝ որ ազատ իցէ ի պատուհասէ նորա, եւ  
 ոչ հզօր՝ որ անկարօտ իցէ պաշտպանութեանն Աս-  
 տուծոյ :

Յօգնաթշուառ խափշիկուհւոյն ի գերութեան անդ  
 իւրում փարեալ գորրանաւ ախտացելոյ մանկանն՝  
 քաղին ոգիք եւ կթոտին ծունկք, եթէ ոչ Աստուած  
 կացեալ առ նովաւ քաջալերիցէ զնա — Բաց զբերան  
 քօ, կինդ եղիւլի, կարգաս զԱստուած եւ ժամանեցէ  
 քեզ յօգնութիւն :

Եւ դու, ո՛վ արքայ, որ ունիս աշխարհս բազումս  
 ընդ իշխանութեամբ քով, եւ ի շարժել յօնիցդ մահ  
 սպառնաս, մի լիցի քեզ ասել երբէք եթէ չիք ինչ  
 ի վեր քան զքեզ, քանդի եւ քան զքեզ մեծ է Աստ-  
 ուած. եթէ մեղիցես առաջի նորա, վաղ կամ անա-

դան թօթափեսցին ի գլուխ քօ կայծակունք բար-  
 կութեան նորա եւ ահեղ ցամանն :

Երկերուք ի Տեառնէ, բնակիչք երկրի, պաշտեցէք  
 զԱստուած, զի ո՛վ ոք իցէ նորա արարած եւ ոչ  
 փառաբերեցէ զնա, եւ ո՛վ իցէ զոր օրհնեաց Աստ-  
 ուած, եւ նա զԱստուած ոչ օրհնարանեցէ :

**Ժ .**

Ա՛ն դոյզն ինչ աւաղ յաին քօ, գուն գործեա  
 ընդ թուով արկանել զայնսօսիկ, տեսցուք եթէ կա-  
 րճ իցես : Թուեան զշիշս խոտոց դաշտաց եւ զտե-  
 րեւս ծառոց : Ապաքէն եւ ոչ մին ի նոցանէ ընդ  
 համարով անկանի, սակայն գործքն Աստուծոյ առա-  
 ւել եւս բազմապատիկ են քան զայնսօսիկ :

Աճէ եղեւին ի բարձրաբերձ լերինս, եւ ուռենին  
 տնկեալ ի զնացս ջուրց գլուխ ի խոնարհ կայ ի զնին  
 վճիտ առուակին, որ սողոսկեալ գնայ առ բնօշն :  
 Պատսպարին կանկառք սայրաստեր փշովք, բրդա-  
 դդեաց մուշլին են տերեւք կակուղք, եւ ճապուկն  
 լուբիս եւ որթք կուռեալ պատատին զնշարեօք,  
 կաղնի՛ խոր արմատս հաստատեալ յերկրի զգէմ  
 ունի շլթայագերծ հողմոց : Ծաղիկն մարդարիտ  
 պճնազարդ բողբոջէ ի ստորոտս լերանց, կակաչն  
 խնդրէ զհող պարարտ եւ զձեռն խնամակալ :

Հիրիկն եւ եղէզն շաղապատին զմիմեամբք, խոտն  
 փափուկ բուսանի ի մարմանդս եւ թուփք փշոց  
 յանդործ երկրի :

Շուշանն ջրային աճէ ի գետս, ծաղկունք նորա  
 լայնածիրք յերեսս ջուրց, շահօքրամն բուսանի ի փայ-  
 ուռսս եւ քաղցր բուրումն նորա ծաւալի ի սփիւռ :



Տերեւք եւ բոյսք ուրոյն ուրոյն ունին զիւրեանց  
գոյն եւ զձեւ, տես զդալարիս որ աճեն ի դաշտս եւ  
զխոտս կոխան ոտից մարդկան եղեալ յանձուկ ճա-  
նապարհս, այլ ոչ ոք սերմանեաց զնոսա :

Են, որք բուսանին ի վերայ բարձրաբերձ ժայռից՝  
անմատոյց ոտից մարդկան, եւ են որ աճեն ի խորս  
անտառաց կամ յանմարդի կղզիս : Աստուած է որ  
ի թեւս հոգւոց թուրցելոց այսր եւ անդր սերմանէ  
զսերմուես, կերպաւորէ զնոսա ի գոյն եւ ի ձեւ ,  
ուսագանէ անձրեւօք, եւ ցօղովն երկնից աճեցուցանէ  
զնոսա, նա է որ երբին երբին երգունէ զնոսա եւ պար-  
գեւէ նոցա տեսիլս ակնապարարս , բուրումն քաղց-  
րութեան հեղու զնոքօք՝ զբեցուցեալ զնոսա ի թա-  
փանցիկ եւ ի նրագոյն թերթս՝ հիանալիս աչաց  
տեսանելեաց :

Զիմրդ մարթ իցէ քնքուշ վարդին զբոսորագեղ  
գոյն իւր առնուլ յարջնաթոյր հողէն , եւ շուշանին  
զբեհեղ իւր : Զիմրդ ի սերմանեաց դուզնաքէից  
բուսանին ծառք մեծամեծք, եւ զիմրդ զիտեն  
բոյսք զտեղի իւրեանց եւ զժամ վերընձիւղելոյ :  
Յետ տեղալոյ ձեան, զլուխ եզնակին ցցուի արտաքս  
ի հոդոյ , եւ յաւուրս գարնանամտի՝ ազդ առնէ եւ  
զգալստենէ նորա :

Են ծաղկունք որք խնդրեն զլերմութիւն արեւու  
ամարայնոյ , եւ դափնի եւ նոճի ընդ այլս մշտա-  
դալար ծառոց զարդարեն զախրութիւն ձմերան :

Ամենայն բոյս բերէ զհամանմանն իւր , ոչ հասկ  
ցորենոյ ծնանի ի կորիզէ , եւ ոչ թին խնձորոյն կարէ  
յառաջ ածել զկեռասենի :

Ի ծածկել ձեան զերեսս երկրի եւ ի սպտել սառ-

նամանեաց զբուսովքն, տարածանէ Աստուած զնո-  
քօք զխնամս իւր զի մի գօսասցին :

Կաստին ծառք ի զարդուց իւրեանց, թօթափին  
տերեւք, եւ գոգցես իմն ոսկերք նոցա եւ եթ մնան  
ի նոսին , եւ ի յարուցանել Աստուծոյ զնունչս գար-  
նանայնոյ՝ փթթեալ ի կանաչագեղ տերեւս դառնան  
անդրէն ի կենդանութիւն :

Ի Հրաշալեաց անտի Աստուծոյ է պահպանութիւն  
բուսոց, եւ մինչ բնաւք զԱստուած քարոզեն յայտ-  
նաբարբառ , ինձ չէ պարտ խօսել զնմանէ, զի ամե-  
նայն դաշտք հրաշից նորա են մատեանք, եւ մէն մի  
ծաղիկ դաս խրատու՝ արկեալ ի գիր . կարկաչ առ-  
ուակին՝ բարբառ իւր է եւ լեզու, եւ ամենայն արա-  
րածք փառաւոր առնեն զԱստուած եւ պատմեն  
զնմանէ :

Ոչ կարեմք տեսանել զԱստուած, զի չանկանի նա  
ընդ տեսլեամբ աչաց, այլ տեսեալ մեր զհրաշալիս  
նորա՝ սիրայորդոր բերիմք ի պաշտօն եւ յերկրպա-  
գութիւն :

Որ առաւել խելամուտն իցէ, առաւել եւս պարտի  
օրհնաբանել զԱստուած . եւ ո՛ւմ հնարանոր իցէ գի-  
տել զթիւ եւ զհամար գործոցն Աստուծոյ :

### ԺԱ.

Հայեցարուք ի կաղնին հինաւուրց , ի փառս եւ  
ի պարծանս շինին . զիմրդ հաստարուն է կոճղ նո-  
րա , ոտք եւ ճիւղք նորա կարծրապինդ եւ բաղ-  
մաթիւ, եւ արմատք նորա խորափիտ հաստատեալք  
յերկրի՝ վերամբարձ ունին զծառն վիթխարի ամե-  
նայն ծանրութեամբ իւրով :



Թուչունք դնեն՝ զբոյնս իւրեանց յոտոս նորա , սշխարք մակաղին ընդ հովանեաւ նորին , եւ շինականք ահումբ առեալ բոլորին զնովաւ , այլ եւ ոչ ումեք յերկցագունից անտի վիճակեցաւ տեսանել զնորափթիթ աւուրս ծառոյն այնորիկ : Բագումք ի մարդկանէ եկին յաշխարհ եւ մեկնեցան անտի , այլ նա անդասին յերկերիւր ամաց հետէ եւ առաւել հաստարմատ կայ մնայ յանտառին :

Սակայն էր երբեմն զի եւ ծառս այս էր իբրեւ զմի ի խողակաց անտի որք շրջասփիւռ դնին ի գետնի աւ ստորոտով նորա : Խողակն յորոյ վերայ դուն ուրեք տեղան կաթ իւր ցողայ՝ սնդեալ սլահէր զծառն ի սերման իւրում . կոճղն այն հաստաբուն , եւ խիտ առ խիտ ոստքն եւ տերեւք ծնան ի միջէ խողակէ անտի , եւ ծառն զամ քան զգամ աճեցեալ բաժանեցաւ ի ճիւղս ճիւղս . զսնունդ իւր առնու յերկրէ , սլարարի յանձրեաց եւ ծծէ զցող երկնից : Այլ հող եւ անձրեւ եւ ցող ապկկար են բուսուցանել ինչ առանց խողակին կամ արգելուլ զխողակն փոխել ի կողնի :

Հանգոյն խողակին եւ մանուկն փոքրիկ աճէ սակաւ առ տակաւ , եւ ի ծնանելն իւրում բերէ յինքեան զբովանդակ եւ զընդարոյս կարողութիւնս իւր , զմիտան , զբատողութիւն , զյիշողութիւն , զգիտութիւն բարոյն եւ զչարին եւ զխնդիր ճամարտին եւ զստոյն :

Յուչ աժ միանգամ զայր հանձարեղ զոր ծանեար եւ զորմէ լուեալ իցէ քո , կամ զայր բազմագէտ որ բազկատարած զիմէ յօգնութիւն նմանեաց իւրոց եւ որ զնմանութիւն բերէ ծառոց մեծաց , ասասջիր

ընդ անձն քո , եթէ եւ սա իբրեւ զիս տղայ էր եւ տգէտ , եւ էր երբեմն զի անբաւական էր զիտել զբարին եւ զչարն եւ որոշել զճամարտն ի ստոյն :

Եթէ չէր քո զխողակ տեսեալ , անմարթ էր քեզ հաւատալ մեծութեան կաղնոյն , եւ եթէ չէր քո զմանուկ տեսեալ , անհնար էր քեզ հաւատալ բանից առն հանձարելի եւ իմաստնոյ :

Գիտութիւն սնունդ է մտաց , որպէս հող , անձրեւ , եւ ցող ծառոյն , որ տարածանէ զարմատս ընդ երկրաւ : Մատենք հմտալիցք սնունդ տան մտաց նորա , եւ բարգաւաճ գործ են զկարողութիւնս մտացն աղբի աղբի ծանօթութեամբք :

Ի գործ արկ զմիտս քո , եւ մատակարարեալ նմա զսնունդ կարեւոր ի բարգաւաճումն նորին :

Քանի արդեօք ամք անցին ի վերայ , մինչեւ կաղնիդ վիթխարի եհաս յայդ հասակ իւր յաղթ , եւ քանի փոփոխմունք եղանակաց : Մինչդեռ տունկ ինչ էր նա մատաղարոյս , զոր եւ մանուկ մատաղ կարէր անաշխատ արմատախիլ առնել եւ կորզել զնա ի հողոյ ի բաց , քանի ամանորք անցին մինչ ի ծառանալ դորա :

Այսպէս եւ զարգուն հասակի մանկանն պէտք են բազմաժամանակեայ աւուրց :

Մարթ է խողակին կորնչել ի գետնի , անհետ լինել ուղեչոյ մատաղ տնկոյն , եւ ջախջախեալ բեկանել ծառոյն . այլ յետ աճելոյն մնայր նմա լինել կաղին . եւ սակայն չէր մարթ զի ի միում եղանակի ծաղկեալ արձակէր սաղարթս եւ ի միւսումն ոչ , որպէս եւ են ծառք որք ընձիւղեալ եւ ցամաքին ի նոյն եւ ի միում տարւոջ :



Մարթ է մանկան իմաստուն լինել կամ անմիտ ,  
այլ ընդ աճելն իւր լինի այր կատարեալ . բնութիւնն  
նորա չէ հանգունատիպ անասնոցն , անմահական է  
նորա հոգի :

Ջան ի գործ արկ փոյթ եւ ինամ ունել զհոգւոյդ ,  
զօրացս զնա զիտութեամբ եւ ճշմարտութեամբ ,  
գիտասջիր զի հոգի պատկեր Աստուծոյ է , եւ յԱս-  
տուծոյ տուաւ քեզ այն :

Կաղնին կեայ ամս հարիւրաւորս բազմաստեղն  
հովանացեալ , այլ ուր ուրեմն զիմէ գնայ յիւրն  
վախճան անխառնակ . ի դալար ուղեչիցն եւ սա-  
ղարթուց մերկանան ոստքն յաղթք եւ երկայնա-  
ձիգք , որք տակաւ ցամաքեալ քեցին ի բնոյն ի շունչ  
ուժիցն մրրկաց . բորբոսեալ ի սունկ փոխի միջուկն .  
թօթափին կեղեւք նորա կենդանապահք , եւ կոճղ  
մերկ արձանացեալ ի դաշտին՝ զնայ ի կորուստ՝ ճա-  
րակ ելով բոցոյն , որպէս եւ այլք ամենայն ի հաստ-  
արմատ եւ ի ստուարաբուն ծառոց , պտղաբերաց եւ  
անպտղից . այլ միտք մարդոյ վասն անմահութեան  
ստեղծան :

Մի արհամարհեր զմանուկն եւ մի ապականեր  
զԱստուածային պատկեր նորա , յարգեսջիր զան-  
մեղութիւն նորա , եւ զանց արա զխակութեամբ  
բանիցն , որք թողին տխեղծ հասակի : Համբակին  
ըմբոստ են բարք , փութասջիր ապա ընդել եւ ամբ  
բանիւք խելամուտ առնել զնա պարտուցն եւ ողո-  
քանօք ածել զնա ի համբոյր եւ ի զգօնութիւն , յոր  
ծնողացն եւ աշխարհին տածին քաղցր ակնկալիք :

**ԺԲ.**

Արեգակն դիմէ ի մուտս իւր եւ ծածկիլ յետ կոյս  
լերանց , անխոփին ճաճանչք նորա , եւ գլշեր լծեալ  
յերկնից մածանի գերկրաւ :

Ո՛չ դոյն խոտոց եւ ոչ երվներանգ փայլ ծաղ-  
կանց նկարին այլ եւս առաջի աջաց խոց . հիւզ ,  
ոչխար , հովիւ եւ ամենայն ինչ ծածկին ընդ սեւա-  
թոյր քօղով գլշերոյ , ոչինչ այլ եւս պատկերի աջաց  
խոց ի տեսիլ՝ որպէս եթէ ոչինչ էր լեալ :

Եղնակ հիքիդ . ո՛ւժ ոչինչ տեսանելի է , քանզի  
ծածկեալ թուին մեզ դալարիք եւ ծաղկունք , հիւզք  
եւ ծառք եւ խաչինք եւ հովիւք նոցա Գարձս դաջս  
ի վեր յերկինս կոյս , դէտաղն կալեալ տես զաստեղս  
երկնից , որք ելանեն մի զմիոյ կնի առ ի լուսաւորել  
զհամատարած մակերեւոյթ երկնից :

Արծաթափայլ լուսին զերդ կուսան նազելի բարձ-  
րանայ ի կամարս , եւ լոյս նորա աղօս ցոլանոյ  
ի կապուտակ դաշտին :

Բոյլք աստեղաց , Արջն մեծ եւ փոքրն , Հայկն ա-  
հեղ եւ բեւեռային աստղն անշարժ՝ որ առաջնորդէ  
նաւուղղին , վառ ի վառ շողշղին զգլխովք մերովք :  
Շառագոյն լոյս երեկոյին երթայ եւ անհետանայ ,  
եւ ճրագունք շիջանին ի սունս , այլ ջահք երկնաւորք  
գեղափայլ շողշղին եւ փոյլին ի կարգս իւրեանց :  
Մի աշխատ լինիր թուել զնոսա , քանզի անթիւ են  
որպէս աւաղ առ ամն ծովու , այլ ոչ երբէք ան-  
սանես որ ի վեր է քան զնոսա :

Հայկն ցուցանէ զրաւմտածանչ ճակատ իւր , եւ  
Շնիկն՝ զսպիտակափառ դէման :



Աւսնայն աստեղք հնազանդ են աստուածական անյեղլի օրինաց, զի Արարիչն տիեզերաց ետ արեգական զիառահեղ ճաճանչս նորա լուսատու լինել աշխարհի, եւ մատնանիշ գծեալ զկայս եւ զշաւիղս մոլորակաց, արգելու նոցա անցանել ըստ սահմանս իւրեանց :

Եթէ հնար լինէր ճանապարհ առնել քեզ յանտահմանութեան անդ իրրեւ զնեւ սրացեալ, յետ բիւր բիւրոց ամաց դարձեալ չմարթէր քեզ հասանել ի ծագս տիեզերաց :

Ձի եւ ի խորին անկիւնս երկնից գոյր քեզ միշտ առաջի ելանել նորոց արեգականց եւ մոլորակաց սահմանելոց յարբանելութիւն :

Ամբարձէք զաչս ձեր ի վեր, ս՛վ հէք մահկանացուք, Աստուած վասն այնորիկ ամբոխեաց զարեւ ի մայր իւր, զի տեսանիցէք զանթիւ գունտս հրեղէնս : Խաւար պատեաց զերկիր զի զմտաւ անխցէք զօրն յետին ահաւոր :

Բիւրաւոր արարածք լնուն զերկիր, նոյն եւ անհամար կենդանիք զօդ եւ զջուր, եւ թ պատկեցէ զբնութիւն եւ զբարս նոցա, կամ չափեացէ զըջանս աստեղաց, եւ ծանիցէ զսահմանս նոցա :

Տիեզերք ամենայն ի ձեռին են Աստուծոյ, եւ ոչ օցտեալ բաժանին ի նմանէ որպէս մանուկ ի մօրէն :

Աստուած զովացուցանէ զբնակիչսն Հրատի, եւ ի ջերմութիւն Երեւակին՝ եօթն գունտք հրեղէնք ի հրամանէ նորա չուրջ դան զնովաւ, եւ ամենայն աստեղք օրհնարանն զԱստուած :

### ԺԳ.

Հասին աւուրք ձմեռայնոյ, դաշտորայք երեւին խոպանացեալք եւ կորդացեալք, չիք ձայն բարբառոյ, եւ ոչ շունչ, ոչ ճռուողումն թռչնոց, եւ ոչ բզզանք միջատաց, ջուրն ծորան սառուցեալ է որպէս զապառած :

Ծառք ձգեալ տարածանեն յօդս զսասս իւրեանց կապտեալս ի սաղարթուց իրրեւ զբազուկս վտխոս, եւ հիւթ երկրի ոչ եւս ընթանայ յերակս նոցա. ոչ եւս երեւին երփնագոյն ծաղկունք եւ ոչ պայծառագեղ երեսք երկնից :

Արեգակն ծագէ թախսեալ եւ տրտում եւ առանց ջերմութեան, գոգցես իմն առ ի յանդիման կացուցանել զաղէտս համատարած բնութեան :

Լաց, բնութիւն, եւ ողբս ի վերայ ծննդոց քոց, որք խուն մի յառաջ անգորրաւէս եւ հրճուալից վայելէին ի գանձս բարեաց քոց. վարդ բուրէր զիւրն անուշաբոյր հոտ. որթ տայր զխաղող եւ ամենայն տունկ զիւրն պտուղ :

Ո՛վ բնութիւն չքնաղ, ծնունդ Աստուծոյ, ասս ինձ, ընդէր տրտում ես, միթէ անտես արար քեզ Աստուած, եւ միթէ ի կորսւտ մատնեալ իցես :

Ո՛չ այդպէս, այլ անպակաս են խնամք Աստուծոյ զքէն, չեւ եւս է քո կոտորած եւ ձեռն նորա ի վերայ քո : Եկեսցէ ժամանակ յորում վերընծիւղեալ ծաղկեցցին ծառք քո, վարդն առնու անգրէն զինկարայր հոտ իւր զառաջին, երկիր՝ զիւր կանաչագեղ զալարիս. գայ եւ գարուն ծաղկասլակ պարել շուրջ զքեւ :



Մի տրտմիր, ո՛ր բնութիւն, եւ ոչ ընդ որս ծածկին ընդ դաշտօքդ անյարիր, եւ չերեւին այլ եւս ի վերայ երկրի :

Զի է զի վարդն եւ մուրտ ամ ըստ ամէ ծաղկեսցին դալարագեղ, եւ մարդ մշտնջենաւորապէս մեռանիցի :

Կորնչիցին արդեօք ընդ հողով այնքանի դիտութիւնք եւ առաքինութիւնք :

Ուխք արտասուաց հեղեալք զգերեզմանօք չմարթիցին արդեօք կենդանացուցանել զմարդն անչնացեալ : Չուռուական այրւոյն չբաւիցեն աղէկարչ թառանչք՝ վերկենցաղ ածել յաստի կեանս զորդին միամօր, զարտին հատոր վաղազբաւ :

Սակայն ո՛չ այնպէս, այլ իմաստութիւն եւ առաքինութիւն անմահ կացցեն մնացեն իբրեւ զմուրտ եւ զվարդ, եւ սրբեցին արտասուք յաչաց մարդկան ի ժամանել յաւիտենական տարւոյն. կացցուք մնացուք ապա եւ այլ փոքր միւս եւս...

### ԺԴ.

Ուստի դաս, որդի մահու, զի լաս եւ առ իմէ տրտմեալ իցես :

— Տեսի զվարդ զի ընդ առաւօսն գեղածիծաղ կենաց իւրոց բացեալ զթերթս յարեաւ՝ շոքոյր երթինագեղ, անցի անդրէն եւ տեսի եւ ահա թարշամեալ կայր զցօղնով իւրով, եւ գեղ նորա անհետացեալ եւ տմոյն : Ոչ եւս քաղցր է բուրումն նորա եւ թերթքն ցան եւ ցիր տարածեալ ի գետնի կոխան լինին ոտից մարդկան :

էր ի դաշտին ծառ մի բարձրաբերձ, ոստք նորա

տերեւազարդք շուրջանակի տարածեալ գործկին հովանի, եւ էր բուն նորա անդրդուելի եւ արմատք իբրեւ զկեռիս : Յետ սակաւուց դարձ արարի անդրէն, եւ ահա հողմն սաստկաշունչ կորզէր ի նմանէ զտերեւս նորա զազաղունս եւ զէակիացեալս, ոստք նորա անկանէին ի սուր սայր կացնոյ փայտահարին :

Եւ այն զեւայն սրդունք սորսորեալ ի կոճեղէ նորա եւ փուտ փայտին թօթալէր իբրեւ զլուչի :

Տեսի զմիջատս զի շողոզէին ի լոյս արեգական, եւ թռթռէին յեցերս ջուրց, թեւք նոցա պայծառք իբրեւ զոսկի եւ զծիրան, մարմինք արագաշարժք եւ իբրեւ զլմուխտ կանաչագոյնք, եւ թիւք նոցա անհամար : Այլ ի դառնալ իմում ընդ երեկս տեսի զկէսս ի նոցանէ ընկղմեալս ի ջուր, եւ զայլս հողմահար սատակեալ : Ծիծառն ալ յափոյ որսացեալ եկեր զնոսա, եւ ձուկն եկուլ ընդ ջրոյն, եւ ոչ մնաց ի նոցանէ եւ ոչ մի :

Տեսի եւ զմարդ ի զօրութեան իւրում, դէմք կայտառ եւ զուարթագին, եւ ամենայն անդամք մարմնոյն աւույզ եւ զօրաւոր, ոստնոյր եւ կայթէր, երգ ի բերան պարէր եւ խնդայր, եւ համարէր եթէ չիցէ ոք իբրեւ զնա երիտասարդագոյն եւ առուգագեղ : Անցի ընդ այն եւ ահա տեսի զմարմին տարածեալ ցուրտ եւ մերկ՝ անշարժ ոտիւք եւ ձեռամբք կարկամելովք, վաղ իսկ կորուսեալ էր հիւքին զկեանս իւր եւ ննջեալ զբուն յաւիտենից :

### ԺԵ.

Յամաքեցաւ ծաղիկն ի ծղօտ իւր, եւ թօթալեցան թերթք նորա ի դետին : Տեսի զայն վերընծիւղ-



եալ եւ զճղօտ նորա կոկոնազարդ , հոտ անուշիկ բուրբեր ի նմանէ շուրջանակի :

Տեսի գլխիմել արեգական ի մուտս իւր, եւ զգլխեր՝ որ պատէր զերկրաւ ծաղէ ի ծագ: Ոչ ինչ յայնժամ ի տես գայր աչաց եւ ոչ ձայն ի լուր ականջաց : Ոչ բազում ժամք անցին ի վերայ , եւ ահա ծագեաց արփին ընդ արեւելս , ոսկեգոյն փայլին գագաթունք լեւանց , արտոյտն ողջունէ զգալուստ նորա , եւ իսպառ մերժի տարագրի խաւարն :

Տեսի զվիջատն բարեատեսիլ եւ առոյգ , այլ ընդ հուպ տեսի զնա թափեալ խալառ ի զօրութենէն եւ ոչինչ խնդրէր ուտել , շինեաց իւր գերեզման , եւ պատատեցաւ ի բժոժին , եւ չիք նորա այլ եւս ոչ շարժումն եւ ոչ զօրութիւն : Այլ յետ ոչ բազում աւուրց եւ ահա ծակէ որդն զգերեզման իւր , տեսի զնա զի գայր ելանէր անտի արտաքս , եւ ի թեւս թեթեւս թռանէր յոստոց յոստս :

Նոյն եւ քեզ լիցի , սվ մարդ , զի եթէ եղծանելի է քո մարմին , այլ անմահ է հոգի քո , եւ բաստ քո յաւիտենական կախեալ է յաստի կենաց քոց :

Ո՞ր բառնայ գքարինս գերեզմանաց , եւ արտաքս կոչէ զմեռեալս , եւ ո՞ր ժողովէ զոսկերս նոցա սփռեալս ընդ աշխարհ ամենայն :

Ո՞վ է դա՞ որ բազմեալ ի վերայ ամպոց հրեղինաց ձայնիւ փողոյ եւ բազմութեամբ հրեշտակաց իջանէ յաշխարհ :

Օճեալն է այն , որդին Աստուծոյ , փրկիչն աշխարհի , եւ բարեկամն արդարոց :

Ուրախացեալ ընդ աստուածային փառս իւր ընկալեալս ի հօրէն յաւիտենից , տայ անտի եւ մօր

իւրում : կոչէ առ ինքն որք ոչ անցին զպատուիրանաւ իւրով , եւս եւ զամենայն վաստակեալս եւ զլկեալս վասն իւր :

Մի արտմիր ապա , որդիդ անմահութեան , պարտեցաւ աւերիչն արարածոց , եւ Յիսուս յաղթեաց նմա իւրով մահուամբ , ուրախ լէր որդիդ անմահութեան :

### Ժ. 2.

Հոտ անոյշ է վարդին , այլ պատեալ է նա փռովք , քաղցրահոտ է շուշան դաշտին , այլ բուսանի նա ի մէջ դժնկաց :

Գեղածիծաղ է գարուն , այլ ընդ հուպ անցանէ , գեղեցիկ են աւուրք ամարան , այլ ի վերայ հասանել ձմերան ոչ եւս յիջեմք զամառն :

Ծիածանն երփն երփն փայլի հանդարտիկ , այլ սուղ ինչ երեւեալ :

Քաղցր են կեանք , այլ վիշտք , մահ՞ դառնութիւն նորա , յղկացելոյն բարեօք կենցաղոյս թոյն խառնեալ է ի բաժակին , զօր դաւուղ աշխարհ տայ նմա քամել ցմրուր :

Գոյ այլ աշխարհ որ վարդին չիք փուշ , ծաղկունք չբուսանին յօրմս , դարուն նորամտատեւ եւ անանց , օրն ցերեկ մշտապայծառ , անդ աճէ ծառն կենաց անթառամ ծաղիօք , անդ անթիւ հոգիք երգեն երգս հոգեւորս եւ ալելուս շուրջ զաթոռովն Աստուծոյ , սերովբէք հարկանեն զիւրեանց ոսկի քնար , եւ քերովբէք թռանին ի թեւս հրեղէնս :

Անդ են հայրենիք արդարոց , եւ չիք անդանօր մուտք չարի :

Զիք անդ հիւանդանալ ումեք , ոչ ջերմութիւն



ամարան, ոչ ցուրտ ձմերայնոյ եւ ոչ մարտ պատե-  
րադմաց, այլ ամենեքեան փարեալ կան գլխմեամբք  
ի սէր անբժութեան :

Ի մեռանել միոյ ուրուք ի բարեկամաց մերոց կամ  
յազգականաց եւ ի ծածկել նորա ընդ հոգով, ոչ  
այլ եւս տեսանեմք զնա յերկրի, այլ դատուք անդ-  
րէն զնա յերկինս, եւ միացուք ընդ նմա՝ անմեկին  
ի նմանէ, անդ՝ ուրանոր սուրբք եւ առաքինիք եւ  
եթօթեանին :

Օրհնել օրհնեմք եւ սիրել սիրեմք զԱստուած  
յերկրի աստ, այլ առաւել եւս յերկինս օրհնա-  
բանեալ սիրեսցուք զնա, անդ տեսցուք զբանն կե-  
նաց զՅիսուս, որ եկն յաշխարհ վասն մեր եւ քա-  
րողեաց զճանապարհն յաւիտեանականս: Անդ տեսցուք  
զԱստուած յանճառելի փառս իւր, զորոյ չէ հնար  
մեզ պատկերել աստէն ի մտի զգերահրաշ տեսիլ,  
մինչդեռ ի մարմնի աստ եմք, այլ սիրել միայն զնա  
կարեմք յաստիս :

Ո՛չ կամիմք թողուլ զերկիր, այլ պարտ է մեզ  
զԱստուած զմտաւ ամել հանապազ, զի անցաւոր  
եմք մեք յերկրի աստ, եւ յանցանել զնալ մեր  
ապտի, յաւիտեանս յաւիտենից լիցի մեզ վայելել  
անդանոր յանվախճան երանութեան :





676

11



002 7168

676

« Ազգային գրադարան



NL0027168



